

Հնչերանգը որպես հոետորական նախադասությունների ձևավորման միջոց

Հարցական նախադասությունը գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներից է, որը, սովորաբար, բաժանվում է երեք տեսակի՝ հավաստիական, լրացական և ճարտասանական, որոնք հիմնականում կարող են տեսակավորվել ըստ արտասանական երանգավորման՝ ըստ հնչերանգի: Հարցական հնչերանգը որոշ կառույցներում դառնում է ոճական հնարանք և արտահայտում ոճական որոշակի երանգավորում: Նպատակ ունենալով ուժեղացնել խոսքի հուզական շեշտը, հոետորական հարցը հաճախ իր մեջ պարունակում է նաև պահանջվող պատասխանը և տարածված է ինչպես անզլերենում, այնպես էլ այլ լեզուներում:

Բանալի բառեր. հնչերանգ, ճարտասանություն, գեղարվեստական հաղորդակցում, լեզվամշակույթ, միմիկա, գործառույթ:

Հարցական նախադասությունը գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցներից է, որը, սովորաբար, բաժանվում է երեք տեսակի՝ հավաստիական, լրացական և ճարտասանական: Իհարկե, այս երեքի արանքում առկա են նաև այլ տիպի հարցական նախադասություններ (մաս-

նակիորեն հավաստիական, կիսահռետորական և այլն), որոնք հիմնականում կարող են տեսակավորվել ըստ արտասանական երանգավորման՝ ըստ հնչերանգի: Կարելի է նույնիսկ ասել, որ հնչերանգային երանգավորմամբ տարբեր նախադասությունները բազմաթիվ են, և այդ ամենը հնարավոր չէ մեկառմեկ բնութագրել: Միայն կարող ենք այն հաստատագրել, որ «հարցական նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը հնչերանգն է, ուստի և յուրաքանչյուր պատմողական նախադասություն համապատասխան հնչերանգով կարող է վերածվել հարցականի (= դառնալ հավաստիանալուն ուղղորդված հարցական նախադասություն): Լրացական-հարցականներում հարցական հնչերանգն ուղղորդված է արտահայտության մեջ առկա այս կամ այն միտքը (=մտքի տարրը) պարզելուն, իսկ ճարտասանականներում, թեև առկայանում է հարցական հնչերանգը, սակայն պատասխան չի ակնկալվում, քանի որ դրանցում հարցի պատասխանը ինքնին հայտնի է կամ ժխտվում է ինքնաբերաբար, ուստի և «հարցական հնչերանգը նշված կառույցներում դառնում է ոճական հնարանք և արտահայտում ոճական որոշակի երանգավորում» (Եզեկյան Լ., 2007: -318):

Ճիշտ է, ոճաբանների կողմից հատկապես շեշտադրվում է ճարտասանական (հռետորական) հարցականը՝ նկատի ունենալով հենց նշյալ հանգամանքը՝ հարցական հնչերանգի գուտ ոճական գործառույթը, բայց, ըստ էության բոլոր տիպի հարցական նախադասությունները, որ կիրառվում են գեղարվեստական տեքստում, ունեն (չեն կարող չունենալ) ոճական հնարանքի արժեք՝ մի դեպքում բացահայտորեն, մյուս դեպքերում՝ ոչ ակնհայտորեն: Եվ բոլոր դեպքերում հարցականների կազմավորման բուն պատ-

ճառը հարցական հնչերանգն է, այդ հնչերանգի ոճական արժեքը:

Բերենք երեք հիմնական տեսակների՝ հավաստիական, լրացական և ճարտասանական հարցականների օրինակներ. մի դեպքում՝ անզլիական լեզվամշակույթի (Չ. Դիքենս), մյուս դեպքում՝ հայկական լեզվամշակույթի (Մ. Նալբանդյան) գեղարվեստական արտահայտությունից, նկատի առնելով այն հազամանքը, որ նշյալ երկու հեղինակների մոտ շատ են տարածված նման հարցականները:

1. Հավաստիական

Օլիվեր Թվիստը՝ ինը տարեկան որբ երեխան, ում բիդլը (ծխական ցածրագույն պաշտոնյան) տարել, կանգնեցրել է հանձնաժողովի «ջենտլմենների» խմբի առաջ, հանկարծ դառնորեն լաց է լինում՝ իմանալով, որ ոչ հայր ունի, ոչ մայր և մեծացել է ծխի խնամքի տակ.

“Yes , sir.” replied Oliver, weeping bitterly.

“What are you crying for?” inquired the gentleman in the white waistcoat. And to be sure it was very extraordinary. What could the boy be crying for?

(Dickens CH.,1955;38)

«Այո, տեր իմ,– պատասխանեց Օլիվերը դառնորեն լաց լինելով:

– Ինչու՞ ես լաց լինում,– հարցրեց սպիտակ բաճկոնով ջենտլմենը: Եվ իրոք շատ տարօրինակ էր: Լաց լինելու ի՞նչ պատճառ կարող էր ունենալ այդ մանուկը»:

(Դիքենս Չ.,1958:13)

«Մպիտակ բաճկոնով ջենտլմենի» կողմից արված հարցումը («Ինչու՞ ես լաց լինում») իրոք հավաստիանալու, մի բան հասկանալու միտումն ունի, ուստի այն հավաստիական է: Բայց հեղինակի կողմից արված կրկնակ հարցումը («Լաց լինելու ի՞նչ պատճառ կարող էր ունենալ այդ մանուկը») դառը հումորի արտահայտություն է, քանի որ ինքը, որպես վիպակի հեղինակ, շատ լավ գիտի, թե ինչու՞ է լաց լինում Օլիվերը. չէ՞ որ նա, ինչպես գրված է մի քանի տող առաջ, պահում էր «արցունքի այն երկու-երեք կաթիլները, որ դեռևս վարանում էին աչքերի մեջ...», և նա կարող էր լաց լինել ամեն վայրկյան. ուստի հեղինակային հարցումը՝ «Լաց լինելու ի՞նչ պատճառ կարող էր ունենալ այդ մանուկը», արդեն ոչ թե հավաստիական հարցում է, այլ զուտ ճարտասանական (=հոետորական), որն ունի անսքող ոճական նշանակություն. հեղինակն այդ հարցումով կարծես ուզում է ասել՝ բայց էլ ի՞նչ չունի մանուկը՝ արտասովելու համար: Ինչպես դիպուկ կերպով նշում է Էդ. Ջրբաշյանը՝ «Հոետորական հարցը պետք է տարբերել սովորական հարցից: Նպատակ ունենալով ուժեղացնել խոսքի հուզական շեշտը, հոետորական հարցը հաճախ իր մեջ պարունակում է նաև պահանջվող պատասխանը» (Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., 1980:191):

2.Լրացական.

Միստր Բամբլը՝ ծխական բիդլը, հայտնվելով փակ դռան առջև, մի պահ զայրանում է միսիս Մեննի վրա և պահանջում է որոշ հարցեր պարզաբանել և ճշգրտում մտցնել .

“Do you think this respectful or proper conduct, Mrs. Mann,” inquired Mr. Bumble, grasping his cane, «to keep the

parish officers a – waiting at your garden-gate, when they come here upon parochial business connected with the parochial orphans? Are you are, Mrs. Mann, that you are, as I may say, a parochial delegate , and a stipendiary?”

(Dickens Ch., 1955:34)

«– Մի՞ թե պատշաճ և հարգալիք վերաբերմունք է ձեր կողմից, միսիս Մենն,– ասաց միստր Բամբըլը եղեգնյա գավազանը ամուր սեղմելով,– դոան առաջ սպասեցնել ծխական պաշտոնյաներին, երբ նրանք գալիս են այստեղ ծխական որբերին վերաբերող ծխական գործերով: Հայտնի՞ է արդյոք ձեզ, միսիս Մենն, որ դուք ծխական հանձնաժողովի վարձկան ծառան եք»:

(Դիքենս Չ.,1958:9)

Երկու հարցումներն էլ լրացական բնույթ ունեն, թեև առկա է նաև հաստատական, հավաստիական մի երանգ ևս՝ «պատշաճ և հարգալիք վերաբերմունք չի դրսևորում Բիդլի հանդեպ ձեր կողմից» և «Դուք լավ գիտեք, միսիս Մենն, որ դուք ծխական հանձնաժողովի վարձկան ծառան եք»: Բայց միստր Բամբըլի հարցումը հնչում է որպես լրացում ու պարզաբանում պահանջող հարց՝ ինչո՞վ բացատրել ձեր անպատշաճ վարմունքը, մի՞ թե դուք չգիտեք, որ դուք մեր ծառան եք: Ուրեմն, եթե հաշվի առնենք զայրացած Բիդլի հարցման տոնայնությունը՝ այն լրացական է, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ միսիս Մեննը գիտի, թե ինքը ո՞վ է, ապա հարցումն ստանում է մեկ այլ երանգ, այն է՝ ես գիտեմ, թե ո՞րն է պատճառը և ո՞վ եմ ես ինքս այս պարագայում: Ելնելով հարցման երկակի բնույթից (լրցական և հավաստիական)՝ կարող ենք ասել, որ երբեմն հարցման տեսակները միանշանակ չեն: Մրանք

կարելի է անվանել երկիմաստ հարցեր, որը նորույթ է հարցական նախադասությունների բնութագրման պարագայում:

3. Ճարտասանական (կամ հռետորական) հարցադրում.

Երբ միսիս Մեննը Բիդլին առաջնորդում է «մի փոքրիկ քարահատակ ընդունարան» և նրան մատուցում մի աթոռ, եղեգնյա գավազանն ու եռանկյուն գլխարկը հանդիսավորապես դնում Բիդլի առջևի սեղանին, վերջինս ակամա ժպտում է՝ «բարեհաճորեն» նայելով եռանկյուն գլխարկին՝ իրեն պատշաճող այդ խորհրդանշանին.

...Yes, he smiled. Beadles are but men, and Mr. Bumble smiled.

(Dickens Ch., 1955:34)

Անզլերենը, կարելի է ասել պատմողական և հարցական հնչերանգների միջև է. բոլոր դեպքերում այն (բնագրում) արտահայտվել է առանց հարցականի՝ իբրև պատմողական նախադասություն, որը հայերենով չէր հնչի առանց հարցական հնչերանգի և հարցական նշանի.

«Այո, նա ժպտաց: Չէ՞ որ բիդլներն էլ մարդիկ են ի վերջո. ահա՛ թե ինչու միսսր Բամբլըր ժպտաց»:

(Դիքենս Զ., 1958:9)

Ի՛նչն է այստեղ հետաքրքիր. այն, որ անզլերեն պատմողականը հայերեն արտահայտվել է որպես հաստատական հարցական՝ «Չէ՞ որ Բիդլներն էլ մարդիկ են ի վերջո»: Բերված օրինակը հաստատում է մի ուշագրավ իրողություն՝ թե՛ անզլերենում, թե՛ հայերենում կարող են լինել ոչ այն է՝ լրիվ պատմողական, ոչ այն է՝ լրիվ հավաստիական

նախադասություններ, որոնք կարող են փոխել իրենց հնչե-
րանգը՝ կապված տվյալ համատեքստի հետ: Մրան հակա-
ռակ կարող են լինել նաև զուտ ճարտասանական բնույթի
(զուտ ոճական-պաթետիկ նշանակություն ունեցող) նա-
խադասություններ.

“Goodness gracious! Is that you, Mr. Bumble, Sir?” said Mrs. Mann, thrusting her head out of the window in well affected ecstasies of joy.” (Susan, take Oliver and them two brats up stairs, and wash ’em directly.) My heart alive! Mr. Bumble, how glad I am to see you, surely!”

(Dickens Ch., 1955:33)

«Օ՛, աստված իմ, այդ դո՞ւք եք, միստր Բամբլը, այդ դո՞ւք եք, սըր,— գոչեց Մեննը կեղծ ուրախությամբ գլուխը լուսամուտից դուրս հանելով: (Սյուզան, Օլիվերին և մյուս երկու լակոտներին տար վերև և անմիջապես մաքրիր նրանց): Որքա՛ն ուրախ եմ, որ տեսնում եմ ձեզ, միստր Բամբլը: Աստված վկա, անչափ ուրախ եմ»:

(Դիքենս.Չ., 1958:8)

Թե՛ անգլերենում, թե՛ հայերեն թարգմանությունում ճարտասանական հարցադրումը նույնն է: Միսիս Մենն, իհարկե, ճանաչում է, որ եկողը միստր Բամբլն է, բայց միևնույն է, հարցնում է՝ «այդ դո՞ւք եք, միստր Բամբլը, այդ դո՞ւք եք, սըր», դրանով իսկ կամենալով ասել, որ հաճելիորեն զարմացած է և նույնիսկ աչքերին չի հավատում: Պետք է նշել, որ այսօրինակ հույզ, զարմանք, տարակուսանք արտահայտող ճարտասանական հարցումները (Ասատրյան Մ., 1987:71) հաճախադեպ են Չ.Դիքենսի երկերում, մասնավորապես՝ «Օլիվեր Թվիստի արկածները» վեպում:

Պետք է ասել, որ նման տարաբնույթ հարցումները բնորոշ են նաև հայերենին: Կարող է բազմապիսի օրինակներ բերել միջնադարյան հայ պատմիչներից, տաղերգուներից և հետագա շրջանի մյուս հեղինակներից: Լավագույն օրինակներ կարող ենք քաղել նոր հայերենի երախտավորներից մեկի՝ Մ. Նալբանդյանի արձակ ու չափածո գործերից՝ բանաստեղծություններից, «Մինին՝ խոսք, մյուսին՝ հարսն», «Մեռելահարցուկ» երկերից և այլն:

1) «Ազատություն՞ն, – ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից.–
Ազատությա՞ն դու զինվոր
Կամիս գրվել այս օրից:
Ո՛հ փշոտ է ճանապարհդ,
Քեզ շատ փորձանք կսպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

(Նալբանդյան Մ., 1958:20)

2) «– Բայց այդ ի՞նչ պսակ է, – շարունակում էր նա յուր մտքիցը, – որ երկու կողմից հավանություն չկա, այդ ի՞նչ երդում է, որ սիրտը չէ տալիս, այլ բերանը միայն, և այն ամաչելուց և այլ հազար տեսակ հարկադրող պատճառներից. ի՞նչ ուխտ է, որ դնում է մի աղջիկը մի մարդու հետ առանց նորա երեսը անգամ տեսնելու»:

(Նալբանդյան Մ., 1585:80-81)

3) «– Բարո՛վ. բարո՛վ , պ. Մանթուխյանց. այս ո՞ր քամին փչեց քեզ մեր մոտ, այս բոպեիս խոսում էինք քո մասին»:

(Նալբանդյան Մ., 1585:156)

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները՝ հայերենում ևս հաճախադեպ են ճարտասանական հարցումները, որոնցում հարցի պատասխանը կարծես չի ակնկալվում, քանի որ հարց առաջադրողը գիտե՝ բանաստեղծը (մարդ էական առհասարակ) ծնված օրվանից կամենում է զինվորագրվել ազատությանը (1), մարդ էակը հարկադրաբար է ուխտ կնքում մեկ այլ մարդու հետ՝ ելնելով հանգամանքներից և գերիշխող պատճառներից (2), պարոն Մանթուխյանցին ոչ թե իսկապես քամին է քշել-բերել, այլ նա հայտնվել է դիպվածաբար (3): Կարելի է ասել, որ սրանք ունեն ոճական հնարանքի արժեք, միտված են խոսքը դարձնել առավել կենսահույզ և աշխույժ...

Նման՝ ճարտասանական (=հռետորական) բնույթի շատ այլ հարցական նախադասություններ են տարածված թե՛ անգլերենում, թե՛ այլ լեզուներում (գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն և այլն): Դրանք՝ ակնհայտ ոճական արժեք ու նշանակություն ունեցող ճարտասանական բնույթի հարցականները կարծես թե մեկ և միևնույն արքետիպյան հարցականի տարբերակներն են կամ լեզվամշակութային հոմանիշները, որոնց դիտարկումը և համեմատումը կարող է բերել ուշագրավ հայտնաբերումների: Օրինակի համար, կարելի է կազմել ճարտասանական հարցումների եռալեզու բառարան (անգլերեն-հայերեն-ռուսերեն) և առանձին-առանձին բնութագրել, այսպես ասած, լեզվամշակութային այդ տարբերակները կամ հոմանիշները: Կարելի է նաև այդ տարալեզու հոմանիշները դիտարկել որևէ հեղինակի

Վ. Շեքսպիր, Դիքենս Չ.Ջ. Բայրոն, Է. Փաունդ, Ջ. Ջոյս և շատ ուրիշներ որևէ գործի և նրա թարգմանությունների հիման վրա: «Օլիվեր Թվիստում», օրինակ, նույն հարցական նախադասությունը դրսևորվել է երեք կերպ:

Ծերունի ջենտլմենը, կամենալով մտաբերել Օլիվերի դեմքը, հարցնում է ինքն իրեն “We have seen something like that look before?”. (Chapter XI, p.115): Բնագրում ծերունի ջենտլմենը ուզում է վերհիշել տղայի հայացքը (= նայվածքը).

“There is something in that boy’s face,” said the old gentleman to himself as he walked slowly away, tapping his chin with the cover of the book, in a thoughtful manner; “something that touches and interests me. Can he be innocent? He looked like. -Bye the bye,” exclaimed the old gentleman, halting very abruptly, and starting up into the sky, “Bless my soul! -Where have I seen something like that look before?”

(Chapter XI, p.115)

Հայերենում թարգմանվել է՝ «...ուրիշ ո՞րտեղ եմ հանդիպել այքերի այդ արտահայտությանը. «Ինչ-որ արտահայտություն կա այդ տղայի դեմքի վրա,– ասաց ծերունի ջենտլմենն ինքն իրեն, երբ դանդաղ հեռանում էր և մտքերի մեջ մոլորված՝ գրքի ծայրով կզակն էր քորում.– Ինչ-որ բան, որը և՛ հուզում, և՛ հետաքրքրում է ինձ.

Արդյո՞ք նա իսկապես անմեղ է: Կարծես այդպես է երևում նրա դեմքից: Օ հ, – բացականչեց ծերունի ջենտլմենը հանկարծակի կանգ առնելով և այքերը հառելով դեպի երկինք: – Տե՛ր Աստված, ուրիշ ո՞րտեղ եմ հանդիպել այքերի այդ արտահայտությունը»:

Իսկ ռուսերեն թարգմանությունում պարզապես ավելում է՝ «Где ж это я раньше мог видеть такое лицо».

«– В лице этого мальчика,-сказал старый джентльмен, медленно отходя от двери и с задумчивым видом похлопывая себя книгой по подбородку,-в лице этого мальчика есть что-то такое, что меня трогает и интересует. Может ли быть, что он не виновен? Лицо у него такое ... Да, кстати!-воскликнул старый джентельмен, вдруг остановившись и подняв глаза к небу.– Ах,боже мой! Где ж это я раньше мог видеть такое лицо»?

(Глава XI ,стр.77)

Ըստ էության ընթերցողը գործ ունի մեկ հարցման հետ՝ որտե՞ղ եմ հանդիպել («նման հայացքի», «աչքերի այդպիսի արտահայտության», «այդպիսի դեմքի»)։ Ի՞նչ խոսք, որ դրանք մեկ և միևնույն հարցմունքի լեզվամշակութային տարբերակումներ են, ավելի ստույգ՝ լեզվամշակութային հոմանիշները։ Պարզ է, որ յուրաքանչյուր նույն հարցը տալիս է՝ ելնելով իր սեփական լեզվական ավանդույթից, նաև մեկնարկելով այն հանգամանքից, թե հարցը ինչպե՞ս է հնչում տվյալ լեզվով՝ տվյալ լեզվակառույցի համատեքստում և, մանավանդ, ինչպե՞ս է հարաբերվում հայտնի կամ մասամբ հայտնի (կամ նույնիսկ անհայտ) սկզբնատիպի հետ։

Բացի նրանից, թե տվյալ հարցական նախադասությունը ինչպես է հնչում տվյալ լեզվով՝ մեկնարկելով լեզվամշակութային ինչ-ինչ ավանդույթներից, շատ կարևոր է նաև հնչերանգը (ինտոնացիան, որը լատիներեն՝ *intonare-*

արտասանել կամ բարձր արտասանել հասկացության հայերենն է, թարգմանվում է նաև էլենջավորում), որը երբեմն հայերեն թարգմանվում է նաև ռիթմահնչերանգ:

Վերջինս ավելի շուտ «պրոսոդիայի» հայերեն թարգմանությունն է, քան «ինտոնացիայի», որը բնութագրվում է իբրև գեղարվեստական հաղորդակցման յուրահատուկ հուզականորեն հազեցած մտքի փոխանցման միջոց (эстетика. Словарь, 1989:114): Իսկ նշյալ փոխանցման միջոցները դրսևորվում են ժամանակատարածային շարժումն արտահայտող մարդկային և երաժշտական գործիքների ձայնով, ինչպես նաև տետողական զանազան ձևերով՝ ժեստ, միմիկա, պանտոմիմիկա:

Գեղարվեստական խոսքի հնչերանգային բազմազանությունը բնութագրվում է ձայների որակական կազմը ցույց տվող հասկացություններով՝ resonance, over-resonance և այլն, ինչպես նաև տեմբր հասկացությի տարբերակումներով (Миндрул О.С., 1980) ու պրոսոդիայի հետ կապված՝ բառի լրացուցիչ առնչանակությունների ձեռքբերումներով (Davydov M. V., Smolenskaya SS.,1972): Բոլոր դեպքերում, հարցական նախադասությունների ձևավորման և փոխակերպումների հիմնական առանցքը հնչերանգն է, որի արտահայտություններից մեկն էլ հռետորական կամ ճարտասանական հարցն է:

Գրականության ցանկ

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե.,1978:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն , Ե., 2007:

3. Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում,
Ե., 1978:
4. Арнольд И. В., Стилистика современного английского языка. Стилистика декодирования, М.,1981.
5. Гаспарян С.К., Лингвопоэтика образного сравнения.
Е., «Лусакн», 2008.
6. Миндрл О.С., Тембр II в функциональном
освещении. АКД., М., МГУ, 1980.
7. Davydov M.V., Smolenskaya S.S., The Prosody of
Enantiosemy. (Lexicology: Theory and Method.) Ed. by
O.Akhmanova, М., 1972.
8. Ջրբաշյան Էդ., Մախչանյան Հ., Գրականագիտական
բառարան , Ե., 1980:
9. Խլղաթյան Ֆ.Հ., Ոճաբանական տերմինների բառարան
տեղեկատու, Ե., 1976:
10. Эстетика словарь, М., 1989.
11. Դիկկենս Չ., Օլիվեր Թվիստի արկածները, Ե., 1958:
12. Диккенс Ч., Приключения Оливера Твиста, М., 1984.
13. Dickens Ch., The adventures of Oliver Twist, М., 1955.

Diana Adikyan

YSLU, Chair of Lexicology and Stylistics.

Intonation as a Means of Forming Rhetorical Sentences

The interrogative sentence is the expressive means of literary speech.

We distinguish between additional, affirmative and rhetorical interrogative sentences, the main formation of which is intonation. They express certain stylistic colouring and sometimes contain the required answer. Stylists emphasise rhetorical interrogatives, which are spread both in English and in other languages.

Key words: rhetoric, function, intonation, fiction, interrogative, linguoculture, additional

Диана Адикян

ЕГЛУ, кафедра лексикологии и стилистики английского языка.

Интонация, как средство формирования риторических предложений

Вопросительное предложение является выразительным средством литературной речи. Различаются дополнительные, утвердительные и риторические вопросительные предложения, которые в основном выражаются посредством интонации. Они выражают определенный стилистический оттенок и иногда содержат в себе требуемый ответ. Стилисты выделяют риторические вопросы, которые распространены как в английском языке, так и в других языках.

Ключевые слова: интонация, вопросительное, риторика, назначение, дополнительный, художественная литература